

հոյ արքային Պարսից , և անդ ումեմն  
'ի զօրականացն պատահեալ զետեղի ,  
և բազում արիութիւնս յոլումբիազս  
ցուցանէ՝ ոչ որ գիտելով զնա :

Յայնժամ ելեալ Հոնն 'ի Հոնաց  
Հոնագուրն անուն , աւար առեալ զաշ-  
խարհն Պարսից , և յղեալ առ Շա-  
պուհ ասէ . Օր է հեղումն արեան ,  
եկ և մենամարտեսցուք ես և դու : Եւ  
ինքն Հոնն վառեալ էր յսնանիւթեայ  
զրահիւք զբարձր և զլայն հասակն , և  
բեւեռապինդ սաղաւարտովն զահագին  
զուին , և զերեքաթղեան ճակատն  
պրնձեան տախտակովն յօրինեալ , զան-  
հեղեղ գեղարդն 'ի բարձր մայր փայ-  
տից , և զսուսերն բոցանշան ունելով ,  
ահաբեկ զտեսանողս առնէր : Ետուտ  
յայտնի անուն Նաբկայ առաջի ար-  
քայի , եթէ գործդ այդ նովաւ վճարի .  
և արքայն արքայից կոչէ առ ինքն զՆա-  
բիկ , թագաւորութեան վճիռ ետ կրն  
քեալ վարազագիր մատանեաւ և ասէ  
ցնա . Թէ մեծ քինուս այսմիկ յանգումն  
արասցես՝ մեծագոյն խոստմանց ես հա-  
սանելոց : Եորա յանձն առեալ կատա-  
րել զինդիրն , և նոյն ժամայն ապաւի-  
նեալ 'ի վերին օգնականութիւնն , Եւ  
կեղեցիք Սիւնեայ , ասէր , օգնեցէք  
ինձ . և առեալ զիւրոյ զօրութեանն զէն ,  
և ճաճանչաւոր և մարգարտական զրա-  
հին արքունի զվայելչականն զայն հա-  
սակ զարդարէր , և վագրակերպեան  
սաղաւարտովն զգեղեցիկ գլուխն , սու-  
սեր ընդ մէջ , զոսկիակապ վահանն յա-  
հեակ ունն ընկեցեալ , և զգեղարդն  
քաջամուխ յաջ բազուկն առեալ , աշ-  
տանակէր 'ի սեան երիվար և խոյա-  
նայր ընդդէմ թշնամոյն : Յարձակէին  
'ի միմեանս . տուրեառ գեղարդեանցն  
ճայթիւն որոտման ելանէր յառաւօտէ  
մինչև ցինն ժամ . զատապարտիւր ան-  
հարին սկայն , յաղթողանայր քաջն  
Նաբիկ . աճապարէր 'ի սուրն միասե-  
ռի , որով անդէն սատակէր զմարդախո-  
ւոյ գազանն , :

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վերմանացոյ ճաբենագրութեանը վրայ հա-  
ճառօր Գեղեկութիւն :

Երբ որ ՊԱՐՍԱԿԱՆ ծաղկեալ ու բարգա-  
ւաճ ազգաց մէջ անուանիներէն է նաև  
Վերմանացոյ ազգը իրեն ճոխ ու հա-  
րուտ մատենագրութեամբը՝ որ օր օ-  
րուան վրայ հռչակուելու վրայ է . մեր  
բանասիրաց ալ այնպիսի մեծ ազգի մը  
լեզուին ու մատենագրութեանը վրայ  
համառօտ տեղեկութիւն մը տալը ար-  
ժան կը սեպենք :

Վերմանական լեզուն երկու մեծ  
ճիւղ կրնայ բաժնուիլ , որոնցմէ այլ և  
այլ գաւառական լեզուներ կը ձևանան :  
Եզուին առջի ճիւղը Բարձր գերմանական  
Բարբառ կ'ըսուի ու Վերմանիոյ միջին  
գաւառները կը գործածուի . իսկ եր-  
կրորդը սորին գերմանական կամ սորա-  
նեան բարբառ ըսուածն է՝ որ հիւսի-  
սային գաւառներուն գործածական լե-  
զուն է : Հիմակուան Վերմանացոյ լե-  
զուն որ Բարձր գերմանական ալ կ'ըսուի՝  
հին վերին ըսուած գերմանական լե-  
զուէն առաջ եկած է . և աս նոր լեզուին  
առջի ծաղկեցրնողը Եւտեր աղանդա-  
պետն եղաւ սուրբ գիրքը ասով թարգ-  
մանելուն համար : Բայց աս գրաւոր  
լեզուն ալ բոլորովին տարբեր է ռամկին  
բերանը եղած լեզուէն որ կ'երեւնայ  
թէ հելլուետիոյ , և հունոսի ու Վա-  
նուբի քով եղած քաղքըներուն մէջ խօ-  
սուած լեզուներէն ձևացած խառնուրդ  
մըն է : Իսկ Սաքսոնեան բարբառը որ  
ստորին Վերմանիոյ լեզուն է ըսինք ,  
հին ատեն ու միջին դարու մէջ գործա-  
ծուած ստորին գերմանական լեզուէն  
առաջ կուգայ . և ասով գրուած գրքերը  
խիստ քիչ են . եղածներն ալ աւելի ռամ-  
կական երգեր են ու համառօտ բառգրքի  
ու քերականութեան պէս գրուածներ .  
միայն թէ ուրիշ գործածական բար-  
բառներուն մէջ մէկն ալ ասոր քաղցրու-  
թեանն ու փափկութեանը չհամար :

Վերմանական լեզուին և մատենա-



գրութեան ծաղկիլն Բ դարուն վերջերը մեծին Վարդուսի ատեն կը սկսի, որ չէ թէ միայն քաղաքականութեամբ հապա նաև իր ուսումնասիրութեամբը մեծ անուն հանեց . ինքը եղաւ առջինը որ ամսոց գերմանական անուններ դրաւ, տւտոնեան լեզուով գրած գրքերը բոլոր ժողովեց, մանաւանդ օրինաց և իրաւանց և ազգային երգոց վերաբերեալ գրուածները, շատ Վատին լեզուով գրուած գրքեր Վերմաններէն թարգմանել տուաւ և Վերմաններէնի համար քերականութիւն մը շինել տալու ետևէ եղաւ : Սեծն Վարդուսի մահուանէն ետքը երբոր Վերմանիան Վաղղիոյ թագաւորութենէն բաժնուելով՝ առանձին տէրութիւն ձևացաւ՝ լեզուին ու մատենագրութեանը վրայ ալ զգալի ու զարմանալի յառաջադիմութիւն տեսնուեցաւ : Վերմանական բանաստեղծութեանց մէջ ամենէն հինը կը սեպուի Վաղղիոյ Սուգովիկոս (Թ)թով թագաւորին՝ Վորմաններուն դէմ ըրած յաղթութեանը վրայ գտնուած գովեստը . աս ատեններս կ'իշխան Վիտամարոս, Վամբերտոս ու Վրունոն պատմագիրները :

Երբոր Սուեվեան հօնաթոֆէն ըսուած ցեղը Վերմանիոյ տիրեց, անոնց իշխանութեան ատենը վիպասանական կամ ասպետական ըսուած քերթութիւնները շատ ծաղկեցան Վերմանիոյ մէջ . աս տեսակ բանաստեղծութիւնները սուեվեան լեզուով գրուած ըլլալուն համար սուեվեան\* ալ ըսուերեն : Եւ որովհետև ասոնք գրողները ընդհանրապէս իշխանազունք էին, անոր համար է որ իրենց գրուածոցը մէջ շատ լաւ կը տեսնուի փափկութիւն իմաստից և բացատրութեան ազնուութիւն . աս իշխանազն բանաստեղծից մէջ անուանիներն են հենրիկոս 2 և Վոնրադոս Գ թագաւորները, Սինկեսաւ Պոհեմիոյ իշխանը, հենրիկոս Գ Պրէզլաւի դուքսը, Սթոն Գ Պրանտպուրկի իշխանը, և այլն : Ընտեսները շինուած վիպասանական բանաստեղծութեանց մէջ ամենէն երևե-

լին է՝ Վիպէլուսիէն ըսուած քերթուածը : Երբոր ասպետութիւնք կամ խաչակիրք վերցուեցան, բանաստեղծութիւնն ալ ազնուականներէն ժողովրդեան անցաւ՝ գրեթէ իրենց համար յատուկ արուեստ մը սեպուելով . և ինչպէս որ ուրիշ արուեստաւորք իրենք իրենց մէջ մասնաւոր խումբեր և ընկերութիւններ ունին՝ նոյնպէս ալ աս բանաստեղծները մասնաւոր կանոններ ունէին . և թէ որ մէկը իրենց ընկերութեանը անդամ ուզէնար գրուիլ՝ պէտք էր որ մէկալնոնց ձեռքին տակը տարիներով կրթութեան ետևէ ըլլայ : Հասարակ ժողովրդեան շարագրած բանաստեղծութիւնքը՝ իշխանազանց գրածներուն պէս վիպասանական նիւթերով վրայ չէին՝ հապա աւելի վարդապետական, բարոյական ու երգիծաբան քերթուածներ . և աս տեսակ բանաստեղծութեանց մէջ ամենէն հռչակաւոր սեպուածն է՝ Վա յեմարայ ըսուած գիրքը : Եւ աս ատեններս է որ Վորիմպէրկի երգիչները թատերական բանաստեղծութիւններ շինելու ձեռք զարկին, որ ինչուան ան ատենը գրեթէ անծանօթ էր Վերմանացոց : Թատերական քերթուածոց հեղինակը եղաւ հանս Սաբս՝ Վորիմպէրկցի կօչկակարը որ Սուտերի ատենները կ'իշխայ . իր գրուածոց մէջ յայտնի կը տեսնուի վառվռուուն և աշխոյժ ոգի մը . և գիւտեր ճարտարելուն կողմանէ սպանիացի Սօփէզտէ Սէկա մատենագրէն ետքը ամենէն հռչակաւորը սեպուած է :

Հնգետասաներորդ դարուն մէջ գրուած վիպասանական և այլաբանական գրքերէն զատ ուրիշ շատ անուանի պատմագիրներ ալ ունեցան Վերմանացիք, ինչպէս Սթոն Փրիսինկայ եպիսկոպոսը որ Ա Փրեդերիկոս կայսեր պատմութիւնը շարագրեց . Սեբաստիանոս Ֆրանք որ Վերմանացոց մէջ առջի ընդհանուր պատմութիւն գրողն եղած է, և այլն : Տպագրութեան գիւտը ինչպէս ամէն ազգաց՝ ասանկ ալ Վերմանացոց մատենագրութեանը ծաղկելուն զօրաւոր նպաստներուն մէկն էր . որուն

ձեռնտու գտնուեցաւ Վ ուտեր ալ սուրբ  
 քրոջ Թարգմանութեանը և հեղինա-  
 կաբար շարագրած գրքերովը : Ինքը  
 եղաւ որ Վերմանիոյ մէջ ըրած կրօնից  
 փոփոխութիւնը աւելի հաճոյ ընելու  
 մտքով՝ սուրբ քրոջ Թարգմանութիւն  
 մը ընելու ձեռք զարկաւ . և ամէն  
 ճիգը Թափելով՝ լաւ ոճովն ու զուր-  
 ցուածքի կերպերովը գերմանական լե-  
 զուին ու մատենագրութեանը նոր կեն-  
 դանութիւն ու նոր պայծառութիւն մը  
 տուաւ , և իր օրինակովը՝ աղանդակից  
 հետևողներն ալ ուսումնասիրութեան  
 յորդորեց : Վ ուտերի գրուածոց յարգը  
 կորսնցընողը՝ աւելի իր մտաց կամա-  
 ւոր կուրութիւնն ու կատաղի նախան-  
 ձայուցութիւնն է . ապա Թէ ոչ՝ չէ Թէ  
 միայն իր լեզուն , հասպա նաև արձակ ու  
 ոտանաւոր Թողուցած մատենագրու-  
 թիւնները ինչուան հիմայ ալ յարգի  
 են Վերմանացւոց և բոլոր ուսումնակա-  
 նաց առջևը : Իրմէ ետքը անուանի ե-  
 ղաւ Մարտինոս ( ) պից որ Սէզեան ը-  
 տուած ուսումնարանը հաստատեց , և  
 բանաստեղծական լեզուն աւելի ծաղ-  
 կեցնելու ջանք ունեցաւ : Իսկ եօթնե-  
 տասներորդ գարուն մէջ շատ ուսումնա-  
 կան և բանասիրական ընկերութիւն-  
 ներ հաստատուեցան , և ասոնց ամե-  
 նուն նպատակն էր ազգային լեզուն ու  
 մատենագրութիւնը ծաղկեցընել . գէշն  
 այն եղաւ որ ծաղկեցընէնք ըսելով՝  
 գերմանական բանաստեղծութե յարգը  
 շատ վար ձգեցին՝ մէջը մոցուցած ա-  
 բուեստակեալ ճոխութեանցը համար .  
 իսկ արձակ գրուածոց ոճը յիրաւի շատ  
 մեծ յառաջադիմութիւն ունեցաւ , և  
 ան ատենէն սկսան Վերմանացիք ա-  
 մէն նիւթի վրայ գրող մատենագիրներ  
 ստանալ : Ինոնց մէջ ամենէն անուանի-  
 ներէն մէկը կրնայ սեպուիլ Փուֆֆէն-  
 տորֆ հռչակաւոր իրաւաբանը՝ որ պատ-  
 մական ուրիշ գրուածներ ալ Թողուցած  
 է . բնապատմութեան մէջ ալ անուանի  
 եղաւ Կոնրադոս Կեսներ որ իրաւամբ  
 Վերմանական Պիլնիոս կոչուած է : Ինչ  
 ատենները երևցած մատենագրաց մէջ  
 հռչակաւոր են Վեփլեր և Լէիբնի-

տիոս կամ Վայպնից , որուն գրուածնե-  
 րը աւելի գաղղիերէն են քան Թէ գեր-  
 մաններէն : Կոթչէտ ալ գերմանական  
 առջի կարգաւորեալ քերականութիւն  
 գրողն եղաւ :

Իսկ անցեալ գարուն կեսէն ինչուան  
 մեր ատենները երևցած անուանի բա-  
 նաստեղծներն են՝ Սողոմոն Կեսներ , որ  
 բաց ՚ի ուրիշ քերթուածներէն՝ գրեց  
 նաև Ղբելի մահուան վրայ գողտր ու  
 փափուկ բանաստեղծութիւն մ՝ ալ , որ  
 հայերէն ալ Թարգմանուած ու տպուած  
 է . Վլոփշտոր՝ որ Սեսիայի գալստեան  
 վրայ զիւցազներգակ բանաստեղծու-  
 թիւն մը շարադրեր է . Սամէր քնա-  
 րերգակ քերթող , Շիլլեր , Սոս , Կե-  
 Թէ , Սահլանտ , Փիլիքեր արքեպիսկո-  
 պոսը որ երկու տարի առաջ վախճանե-  
 ցաւ , և այլն : Իսկ հիմկու Վերմանա-  
 ցւոց ազգին մէջ գտնուած բանաստեղ-  
 ծից Թիւր չկայ , միայն իրէքհարիւր  
 Թատրերգակ բանաստեղծք կը համ-  
 րուին : Շատ անուանի պատմաբան-  
 ներ ալ ունեցեր են Վերմանացիք , ինչ-  
 պէս Մայլաթ , համմեր , Վամիֆէն ,  
 Սաումեր , Սիլբէն և այլն : Բարոյա-  
 խօսաց մէջ անուանիներն են Ղխիօն ,  
 հուկոյ , լիփպուլ , Վանթ , Լաւաթր  
 և այլն . աշխարհագրաց մէջ ալ Կել-  
 րարիոս , Սփրէնկէլ , Պիլինկ , Սիթ-  
 Թէր՝ որ մեր գարուն ամենէն հռչակա-  
 ւոր աշխարհագիրը սեպուած է . հնա-  
 խօսք՝ Պօփ , Սօզէն , Պօհլէն և Լաս-  
 սէն . Թող ուրիշ անթիւ մատենագիր-  
 ներն որոնք բանասիրական , աստուածա-  
 բանական , փիլիսոփայական և ուրիշ  
 շատ տեսակ գիտութեանց վրայ անհա-  
 մար գրքեր Թողուցեր են , որոնց Թէ  
 որ միայն անուննին ալ յիշատակել ու-  
 ղենայինք , խօսքերնիս չափէն աւելի  
 պիտի երկըննար :

Վերմանացւոց հանձարոյն ու եր-  
 կայնմտութեանը մէկ փառաւոր ապա-  
 ցոյցն ալ՝ տպագրատանց ու տպուած  
 գրքերու բազմութիւնն է , որուն նմանը  
 մէկ տեղ մըն ալ չկայ . և ասոր պատ-  
 ճառն ալ է Վերմանացւոց անխոնջու-  
 թիւնն և ուսումնասիրութիւնը :